նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ -Ն

2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱՌ ԳՅՈՒՂԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻԴԱՐՊԱՍ, ԼԵՌՆԱՎԱՆ, ԱԹԱՆ, ՁՈՐԱՄՈՒՏ, ՆՈՎՈՍԵԼՑՈՎՈ, ՊԵՏՐՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՇԱՄԼՈՒՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ, ՄԱՐՑ, ԱՐԴՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

2010 թվականի մարտի 7-ին կայանալիք Արարատի մարզի Լանջառ գյուղական համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, 2010 թվականի մարտի 14-ին կայանալիք Կոտայքի մարզի Արզական գյուղական համայնքի ավագանու անդամների, 2010 թվականի մարտի 21-ին կայանալիք Լոռու մարզի Դարպաս, Լեռնավան, Աթան, Ձորամուտ, Նովոսելցովո, Պետրովկա գյուղական համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների, Շամլուղ քաղաքային, Մարց, Արդվի գյուղական համայնքների ավագանիների անդամների հերթական

ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովին 2010 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 5.019.365 դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին։

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը 2010 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 1.023.831դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին։

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը կատարել նախահաշվին համապատասխան՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների։

3.Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին ընտրողների ցուցակների կազմման, վարման և ընտրողների ծանուցագրերի տպագրման, առաքման ֆինանսավորումը կատարել նախահաշվին համապատասխան՝ համաձայն N 3 հավելվածի։

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Զեկուցող ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյան

Տեղեկանք հիմնավորում

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջի և

- Արարատի մարզպետի 9.121.2009թ. թիվ 121 որոշման մարզի Լանջառ գյուղական համայնքում 2010 թվականի մարտի 7-ին կայանալու է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հերթական ընտրություններ։
- Կոտայքի մարզպետի 14.01.2009թ, թիվ 1 որոշման մարզի Արզական գյուղական համայնքում 2010 թվականի մարտի 14-ին կայանալու է համայնքի ավագանու անդամների հերթական ընտրություններ։
- Լոռու մարզպետի 16.12.2009թ. թիվ 313-Ա որոշման մարզի Դարպաս, Լեռնավան, Աթան, Զորամուտ, Նովոսելցովո, Պետրովկա գյուղական համայնքներում կայանալու են համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների, Շամլուղ քաղաքային, Մարց և Արդվի գյուղական համայնքներում ավագանիների անդամների հերթական ընտրություններ։